ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՑԱԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МЕРИЯ ЦАХКАЛАНДЖ

No
«06» «04» 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշման մեջ կատարած լրացումները և փոփոխությունները.

Առդիր՝ 44 էջ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտքագրման թիվ 3313-12
06 04 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2012 թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ N2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Հողի օգտագործման նպատակային նշանակության փոփոխության կադաստրային արժեքի տարբերությունը՝ 246.0 հազար /երկու հարյուր քառասունվեց հազար / դրամ ավելացնել 04-9-1 հատվածի 8411 հոդվածին և նախատեսել 01-1-1 հատվածի 5112 հոդվածին:

2) Պետության կողմից տրամադրված ֆինանսական համահարթեցման դոտացիայի 16410.5 հազար դրամից պակասեցնել 2700 դրամ:

3) Հողի հարկի վրա ավելացնել 2700 դրամ:

4) Եկամտային մասի պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների 600.000 դրամ պակասեցնել:

5) Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04-2-1 հատվածի 4241 հոդվածից պակասեցնել 600.000 հազար դրամ:

6) 01-1-1 հատվածի 5121 հոդվածի 729.1 հազար /յոթ հարյուր քսանինը հազար հարյուր/ դրամը տեղափոխել 01-1-1 հատվածի 5112 հոդվածին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	կողմ (ստորագ.)	դեմ (ստոր.)	ձեռնպահ (ստոր.)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Ղազարյան Ալիկ			
4. Պողոսյան Մխիթար			
5. Առաքելյան Վաչագան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ***ՄԱՆՎԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ***